



ԳԵՐԾԱՆ ԱԲԳԱՐՅԱՆ

(Բանադրական գիտությունների դոկտոր)

ՎԵՐԾԱՆ ՈՒԹՈՒՆ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՂԻ»

Պարույր Սևակի հիշատակին

Հայ միջնադարի մեծագույն բանաստեղծի ամենահոչակված տաղերից մեկը «Հարության տաղն» է, որը բազմից հրատարակվել է մեր քերթողության լավագույն նմուշները պարունակող անհատիր բոլոր հատընտիր ժողովածուներում և թարգմանվել է նաև այլ լեզուներով: 10-րդ դարում այն վերաբեր է երգի՝ և արդեն հազար տարի է, ինչ ուղեկցում է ժողովրդի կյանքին: Անմահ Կոմիտաս վարդապետի ձեռքով գրի առնըլած և այսօր էլ բեմերում հնչող մեղեդին աչքի է ընկնում «երաժշտական հարուստ բովանդակությամբ ու խոր հուզականությամբ: Սայդիկը ծավալուն վոկալ պոեմ է, հագեցված մերժ խմբուն, մերժ լիրիկական տրամադրությամբ»²:

Սայսիանդերձ տաղը ժամանակակից ընթերցողի առջև դևուն չի բացել իր գաղտնիքները: Տես վերծանված Նարեկացու հիմ-

նական այլարանական մորքերը, որոնցից և կախված է տաղի ընդհանուր գնահատականը, ինչպես նաև երաժշտական տրամադրության նորերանգների բացահայտումը: Որոշ մտքեր էլ աղալվաղված են մերթ ձեռնագրերն ընդորինակած գրիչների, մերթ թարգմանիչների, մերթ գրականագետ-մեկնաբանների ձեռքով: Այս ամենն բացահայտումը և տաղի ընդհանուր ուսումնասիրությունը, վերծանումն ու վերականգնումը հանդիսանում են մեր սույն հոդվածի հիմնական նպատակները:

1

Տաղն սկսվում է «Փա՛ռը Քրիստոսի ամենազօր յարութեան» ստորով: Սա տաղին ողեկցող գիսավոր տողն է և կրկնվում է նաև տաղամիջում ու տաղավերջում: Սակայն նրա կապը տաղի անմիջական բովանդակության մեջ այնքան անսպասելի է, որ մեր գրականագետներից մեկն իրավամբ գրել է. «Այժմ դժվար է հասկանալ, թե ինչ կապ ունի այդ տաղը իբրև այլարանություն՝ Քրիստոսի հարության մեջ (իսկ եթե չիներ առաջին տողը, բոլորովին չէր էլ կարող այլ կապի մասին որևէ միտք ծագել)»³:

¹ Երաժշտական Ն. Թամիմիջյանի կարծիքով տաղը եղի է վերածել ինքը Նարեկացին: Տես Ն. Թամիմիջյան, Կոմիտասը և Նարեկացու տաղերը.—«Բանակը Երևանի նամակարանի», 1969, № 3, էջ 43:

² Ռ. Աքայան, Արմենավոր նարդրում նաև երաժշտական խաղաքրության մեջ.—ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1953, № 6, էջ 88:

³ Մ. Մկրտչան Գրիգոր Նարեկացի, Երևան, 1955, էջ 154:

Սլաքանորեն ներկայացված գործողությունների առանցքը տաղում սալլի է, բայց մինչև օրս «հայտնի չէ, թե նարեկացին ինչ է հասի ունեցել, երբ նշել է, որ սալլը տեղի շարժել կարող է միայն սալլապանը»⁴:

Այդ սալլապանը, ինչպես ինքը նարեկացին է հայտնում, ոչ այլ որ է, բայց Հովհաննես Մկրտիչը: Սա նկատի ունենալով՝ Ա. Չոպանյանը գրել է. «Որպեսզի սալլը քալե ու հասնի երուսաղեմ ու մարդկությունը ազատագրվի, պետք է, որ Հիսուսի գալուստն ավելող Հովհաննեսը (ճորտն ճոճ և ճապուկ) ձայն բարձրացնե, ու սալլին կուրծքը՝ Ավետարանը իր բարբառը լսեի ընե»⁵: Այստեղ պարզապես կրկնված է նարեկացու իրեն խորք այն մասին, որ սալլի շարժման դրդիչը Հովհաննեսն է և որ սալլի կուրծքը ալլաքանորեն նշանակում է Ավետարան: Իսկ թե ինչո՞ւ է նարեկացին Հարության տաղի բովանդակությունն ընտրել անպատճան սալլի շարժումը, ինչո՞ւ այդ սալլի սկզբում չէր շարժվում, ինչո՞ւ սկսեց շարժվել միայն Հովհաննեսի միջամտությունից հետո՝ այս հարցերը մնում են անպատճախան:

Ստորև մենք կիրորենենք գտնել պահանջվող պատասխանները, բայց մինչ այդ հարց է ծագում. եթե «ալլաքանության պատճառով, գուցե և աղավաղված լինելով, հորինվածքի գաղափարը մթնած է»⁶ և տաղի իմաստը լրիվ հայտնի չէ՝ ի՞նչն է եղել նրա գնահատման չափանիշը:

Հարցի պատասխանը տալիս են առաջին ներթին տաղը պարունակող ձեռագրերը: Սրանցում ընդօրինակված է մեծ մասամբ տաղի առաջին մասը: Իսկ մեկնողական շարունակությունը գտնում ենք շատ քիչ ձեռագրերում: Տաղի միշնադարյան երածշտական ձայնագրությունները նույնական հիմնականում ընդգրկում են առաջին մասը, որու ունի ինքնուրույն նշանակություն և ու տակալին միշնադարում էլ կատարվել է որպես առանձին երգ... № 3189 ձեռագրում,

⁴ Армянская средневековая лирика. Вступительная статья, составление и примечание Л. М. Мкртчяна. Ленинград, 1972, էջ 365.

⁵ «Անախիս», Փարիզ, 1907, 3—4—5, էջ 49:

2պահանջ օգտվել է իր ժամանակ հայտնի եղան տպագիր միակ ընթերցվածքից, որը գրչական վրիպում է, այս ձեռով. «ի յառաջեն առնալ շարժումն կործն սալլին, նա ձայն ածէր եզնամոյին» (Գրիգոր Նարեկացի, Մատունագրութիւնը, Պէտառիլ, 1810, էջ 474): Այսուղ «նա ձայն ածէր» առումապտությունը պարտնակող տողը պատահաբար միացել է սալլի կրծքին վերաբերող տողին և առիթ տվել «ավելուանի ձայնը լսեի դարձնելու» մտքին:

⁶ Մ. Արեգակնալի, Հայոց նիմ գրամբանական պատմություն, Երևան, 1944, էջ 566:

օրինակ, բերված է քննարկվող տաղի նենց միայն առաջին հատվածը», որն «ինքն իր մեջ ամբողջական մի երգ է»⁷:

Այսպիսով՝ միշնադարյան մինչև մեր օրերը տաղի գնահատման հիմնական չափանիշը է հանդիսացել սալլի հանդիսավոր երթը պատկերող առաջին մասը, որն իրավամբ չգերազանցված մի պատկեր է իր տեսակի մեջ:

Մասին լանջերից գլորվելով իշնում է գեղեցիկ զարդարված սալլը, որը քաշող սպիտակ եզների մազերը մարգարտի պես փայտում են և որի վրա խորձ-խորձ բարձրված մանուշակը, կորնկանը, խորձը իրենց բազմերանգ հիմարով և անուշ բույրով ուղեկցում են սալլին: Այս ամենն այնքան գեղեցիկ է, որ չէր կարող չիմայել ընթերցողին ինչպես միշնադարում, այնպես էլ այսօր:

Բայց սա նախ և առաջ ալլաքանական իմաստ ունի և վերաբերում է Հին ու Նոր Կոտակարաններին: Աստվածաշնչական մեծությունները պատկերելով համար հայ չափանիք քերթության մեջ առաջին անգամ որպես ալլաքանության միջոց է ընտրված սալլը: «Գլուխական սալլի և սալլապանի մի այնպիսի հիմարանց նկարագրություն մեր գրականության մեջ, միանգամայն նորություն էր, իսկ այդ նորության կարևոր կողմերից է արտահայտությունների և բառերի մեծ մասի ծովովրդական բնույթը»⁸:

Հիրավի, Նարեկացին սալլի շարժումը ավելի ցայտուն դարձնելու համար կրկնում է «գիլ» «գիլ» հնչյունները, ճիշտ այնպես, ինչպես ծովովրդական երգի հեղինակը կրկնում է «գալ», «զալ» բառերը:

Այսպես. Նարեկացին գրում է.

Ի Մասեաց աջ կողմանէն

Սալլիկն ի գիլ գայր, ի գիլ...

Իսկ ծովովրդական երգի մեջ ատված է.

Ասիս-Մասիս լեռնէն ի վար...

Գալ, գալ գազան⁹ զան իմացեր...

⁷ Ն. Թահմարյան, Աշվ. աշխ., էջ 50:

⁸ Նույն տեղում, էջ 58:

⁹ Մ. Մկրտչյան, Աշվ. աշխ., էջ 154:

¹⁰ «Գազան» բառը վերականգնել ենք մենք: Զննագրում (Մաշտոցի անվան Մատունագրան, ձ. № 7709, էջ 89թ) և Աս. Մնացականիսին բրատարակած ծովովրդական երգերում (Համբարձում միշնադարյան ծովովրդական երգեր, Երևան, 1956, էջ 112: Այսունուն՝ Ժողովրդական երգեր) երան փոխարեն գրված է: «զալ զան»: Մնացականին սա նույնագր տուի և վերծանել է «զալ զան» ձևով: Բայց որ դա վիրապ չ' երևում է երանից, որ ամբողջ երգը նորինված է ույ վանակի տուերով, իսկ վիրապ պարտնակող տողում մի վանկ սպիտի է: Դա նենց «զալ զան» վիրապ պարտնակող նետնաներով առա-

Մեկ որիշ դեպքում Նարեկացին ասում է.
Եթէ ասմիքն են արծարի, լուծն էր ուկի
Եւ սամոտինք ապրիշիմի...

Խակ ժողովրդական երգում
Իր սամատան էր ուկէ
Սամոտ կապերն ապրըշում...

Նարեկացու տաղում եզները խաղում,
ցնծում են ճիշտ այնպես, ինչպես ժողովրդ-
դական երգում խաղում, ցնծում է ծովը.

Դարձեալ խաղայի եզնամոլըն,
Խաղայր, ցնծայր աթոռակըն¹¹...

(Նարեկացի)

Ահա ցնծայր ծովն ու ծփալ...
Խաղայր, ծփալ
Ի այն զալին տայ¹²...
(Ժողովրդական երգ)

Այլաբանելու նարեկացիական եղանակը
նույնպես հարազար է ժողովրդական եր-
գերում հանդիպող ազգաբանական եղանակ-
ներին: Այնպես, ինչպես որ Նարեկացին
տաղի առաջին մասում հիշատակում է հար-
յուր բարդ խոյրը¹³ և տաղի վերջում բա-
ցատրում է, որ դրանով ինքը նկատի է ունե-
ցել մարգարեներին, այդպես էլ՝ ժողովրդա-
կան երգերից մեկի առաջին մասում հիշա-
տակում են «արփիափայլ տերևները» և հե-
տո հայտնվում է, որ դրանք մարգարեներն
են.

Եթէ հարիր բարդ խոյրձան...
...Են այն հարիր բարդ խոյրձանն
Այն նահապետքն են, մարգարէք...
(Նարեկացի)

Տերևն ամեն արփիափայլ...
...Տերևն ամեն արփիափայլ՝
Սուրբ մարգարէքն էր¹⁴...
(Ժողովրդական երգ)

«Հարության տաղում» և ժողովրդական
երգերում առկա արտահայտությունների
արտաքին ընդհանություններն ատիթ են
տվել մտածելու, թե տաղը «միամիտ ու
պարզուկ ժողովրդականություն ունեցող մի

չացած ավելորդությունն ։ ։ Մ'ո՞ւ վերաիրանած «զա-
գան» բարդ վերացնում է միայն և կարգադրում է
երգի խանգարված տաղաչփությունը:

¹¹ Զետագրերում և Մնացականանի Քրեսոնմա-
տիայում վրիպակաբար՝ «եզնամոլին», «աթոռակիլին»
(ավելի մահրամասն տևս սորոր):

¹² Ժողովրդական երգեր, էջ 304:

¹³ «Խոյրձ» բարդ Ա. Սուրիհապանի «Հայոց լեզվի
նոմանիշների բառարանում» ունի ինը նոմանիշ
(տևս նշված բառարանը, Երևան, 1967, էջ 268):

¹⁴ Ժողովրդական երգեր, էջ 296:

երգ»¹⁵ է: Հայտնվել է նաև այն կարծիքը,
թե տաղը «Գրիգոր Նարեկացին 10-րդ դա-
րում ստեղծել է» «հավանաբար նման եր-
գերի օգտագործմամբ»¹⁶: Աքեղյանը, սա-
կայն, գրում է. «Բանատեղը լեզվին իշ-
խող արվեստավոր է: Նրա այս տաղը մեր
խառն ազատ ուղանակորների մի շատ ըն-
տիր օրինակ է, որի մեջ ուղանակորն իր
բազմազան ձևերի ոիթմով ըստ ամենայնին
հարմագիտում է բուլանդակության փոփոխու-
թյանը՝ մնալով միանգամայն և ընդհանրա-
պես շատ ոիթմիկ»¹⁷:

Լեզվին իշխող արվեստավորի մասին մե-
ծանուն գիտնականի խոսքը հաստատեմք
ժողովրդական երգերից և «Հարության տա-
ղից» բաղված մեկական հասվածների հա-
մատասույթյամբ: Ժողովրդական երգում աս-
ված է.

Արսէն ունի գոմ մի ոչխար,
Գոմ ոչխարի պճել՝ ուկի.

Արսէն ունի թաղվար գրմէշ,
Թաղվար գրմշու կոտոշ՝ ուկի¹⁸:

Այստեղ նոյնպես, ինչպես և «Հարության
տաղում» գովերգվում են երկրագործին վաս-
տակ բերդ կենդանիները: Ոչխարի պճելը
ուկի է նաև գոմեշի կոտոշը: Բայց
կարեին՝ է համեմատության եզր գոմել այդ
և Նարեկացու հետևյալ տողերի միջն.

Եթէ եզինքն են սաթ ու սպիտակ,
Ծաղկախայտուցք, արագաքայլը, ըն-
թացականիք,
Եղջիւրն ամեն խաչանման,
Եւ մազն ամեն հոյլ մարգարիտ:

Ժողովրդի բառապաշարն է՝ պճելը, թալ-
վան ու կոտոշը, իսկ Նարեկացուն հրապո-
րել են սաթը, հոյլ մարգարիտը, խաչանը-
ման եղջյուրը «ծաղկախայտուցք, արագա-
քայլը, ընթացականիք» եզները: Սա դասա-
կան բարձր ճաշակ է:

Տաղի որոշ տարրեր գոցեն և գոյացած լի-
նեն ժողովրդական պատկերացումներից:

¹⁵ «Անախիս», Փարիզ, 1907, № 3—4—5, էջ 50:
Այսուղ Ա. Զոպանյանը կամքած է նայունը «Հա-
րության տաղը» Նարեկացուն պատկանելու վերա-
բերյալ: Հետազոյում նա իր կարծիքը փոխուց և ըն-
դունեց, որ Նարեկացու նոյնիշն այն տաղը էր, որոնք
«չափազանց արտառոց են լեզվով՝ կարելի է ընդու-
նել իրը Նարեկացվոյն գործ» (Հայ Եջեր, Փարիզ,
1912, էջ 1, Բ):

¹⁶ Ժողովրդական երգեր, էջ 465:

¹⁷ Ա. Աքեղյան, Հայոց նին գրականության պատ-
մություն, հուն. 1, էջ 566:

¹⁸ Ժողովրդական երգեր, էջ 334:

Օրինակ, Նարեկացին «միաւորեալ Երրորդութիւն» ցուց տալու համար այլաբանորեն ընտրել է մանուշակը և ոչ թե մեկ այլ ծաղիկ:

Հնարավոր է, որ ժողովրդի մեջ մանուշակի «միավորող հասլության» մասին շրջած լինի մեզ անհայտ մի գրուց (Նարեկացին «Ողբերգության մատոյանում» նույնականութեալ դիմել է ժողովրդական ստեղծագործությանը), բայց տաղն ամբողջությամբ բոլորովին էլ «ժողովրդական բանահյուտյունց վերցված մի լեգենդ»¹⁹ չէ և ունի շատ որոշակի «Նարեկացիական» բովանդակություն, որը ցուց կտրվի ստորև:

Հավանական չէ նաև այն միտքը, թե տաղը Արծունյաց թագավորների կյանքից ընդօրինակված մի դրվագ է՝ «թագավորական հանդիսավոր գնացքը սայլով»²⁰: Թագավորական գնացքի համար անշուշտ ավելի հարմար կլինենան կառը և արագընթաց նժուգները, բայց սայլը և եզները:

Նարեկացու այսօրվա գնահատականի համար հպատակորը հենց այն է, որ նա հանդիսավոր երթը պատկերել է ոչ թե թագավորական կառքի կամ նզեկիելի տեսիլի մեջ պատկերված «քրովքանիւր» երկնային կառքի միջոցով²¹, այլ ժողովրդին ավելի մատչելի, ավելի տարածված եզների սալով: Այս սայլը վարող

Այն ճորտն ճռճ էր ու ճապուկ,
Ուումիշակ, հաստաբազուկ,
Լայնաթիկունք, խարտիշագեղ, ահեղա-

գոշ...

10-րդ դարում ապրած մի բանաստեղծի համար սայլի և սայլապահի այսպիսի գովքն այնքան մեծ արժանիք է, որ այլևս կարիք չկար նրան վերագրելու նաև ինչ որ հավելյալ, անիրական վաստակեր: Այսուամենանիւ գրականագիտության մեջ Նարեկացուն վերագրվել է նույնիսկ այնպիսի մի միտք, ինչպիսին է «հովիվներին ու ճորտերին կյանքի շարժի ուժ» համարելու միտքը. «Վերագննութիւն էպոխայում կյանքի կոչվեցին աշխատավոր մասաների ստեղծագործական ուժերը... Բոլորժական կուլտուրան

¹⁹ Մ. Մկրտչան, նշվ. աշխ., էջ 154: Հմմո. Ս. 2-ապահով, «Անահիտ», 1907, № 3—4—5, էջ 50:

²⁰ Մ. Արենյան, նշվ. աշխ., էջ 566: Հմմո. նաև Գրիգոր Նարեկացի, Տերստի թարգմանությունը, Անրածական ու ծանոթագրությունները Արշավիր Միսիւրյանին, Երևան, 1957, էջ 26:

²¹ Եզնեկիելի տեսիլի երկնային կառը Նարեկացին ըլքագրել է «Ներբող սրբոյ խաչին» երկու (Գրիգոր Նարեկացի, Երկրորդ մատուն ճամփ, Կենսութիւն, 1827, էջ 45, 46):

այդ էպոխայում բոլորժականորեն սահմանափակ չէր... Այդպիսին է Նարեկացու այս բանաստեղծության մեջ Հովհաննես Մկրտչը, որը հովիվ է, ճորտ և նրանցից է կյանքի սայլը, կյանքը մղում է առաջ...»²²:

Հովհաննես Մկրտչիչը, ճիշտ է, «Հարության տաղի» ամենագիտավոր ներուներից է, բայց նա չէ, որ «կյանքը մղում է առաջ»: Իրական մղիչ ուժը, Նարեկացու ըմբռնմամբ, հարության գաղափարն է, որի պատճառով էլ տաղը կոչված է «Հարության տաղ»:

Մ. Արենյանը սայլի շարժման գործում Հովհաննեսին, ընդհակառակը, ոչ մի դեռ չի հատկացրել: Նա գրում է: «Սայլն ունի ամեն պատրաստություն ու զարդարանք... ունի հարյուր բարդ խոլրձան, մի բարդ (պեսը է ասվեր «վեց բարդ»—Գ. Ա.) կորնկան, մեկն էլ մանուշակ... նրա քշող ճորտը... ձայն է տալիս եզնամուխն, կանչում է պթուակին, բայց և այնպիս սայլը Մասիսի աջ կողմում անշարժ կանգնած է մնում: Սակայն երբ լծում են եզները... այդ ժամանակ ահա շարժվում է սայլը»²³: Այսուեղ գրականագետի ուշադրությունից վրիպել է այն հանգամանքը, որ եզները տաղում հենց սկզբից էլ ներկայանում են սայլին լծված (եթե այդպիս չիներ, ճորտը չէր կարող ձայն տալ եզնամուխն): Բանն էլ հենց այն է, որ եզները լրձված են և ամեն ինչ կա, բայց սայլը չի շարժվում մինչև որ Հովհաննես Մկրտչը չի ձայնում եզնամուխն:

Նա ձայն ածէր եզնամուխն...
Եւ ահա շարժէր սայլիկն այն:

2

«Հարության տաղը» մեկնաբանելու փորձերն ակտել են դեռևս միջնադարյան գրիչները, որոնք, սակայն, տաղի բուն բովանդակությունը նույնական չեն հասկացել և Նարեկացու ստեղծագործությունը գետեղել են երբեմն բոլորովին անհամապատասխան վերնագրերի տակ: Այսպես, օրինակ, Մաշտոցի անվան Մատենադարանի № 2339 ձեռագրում (էջ 274թ) տաղը ընդօրինակված է «Տաղ անոց և գեղեցիկ տեպեան մարգարէն» վերնագրով: Սա նշանակում է, որ գաղափար օրինակի գրիչը կարծել է, թե տաղի այլաբանական միտքը մարգարէի տեսիլին է: Նա չի հայտնել, թե ո՞ր մարգարէի տեսիլին է ինքը նկատի ունեցել, սակայն ձեռագրում ընդօրինակված տաղի հատվածը

²² Գրիգոր Նարեկացի, Տերստի թարգմանությունը, Անրածական ու ծանոթագրությունները Արշավիր Միսիւրյանին, Երևան, 1957, էջ 26:

²³ Մ. Արենյան, նշվ. աշխ., էջ 566:

ամենից առաջ հիշեցնում է Եսայի մարգարեի տեսիլը. «Տեսի զՏէր նաև առ յաքով բարձրութեան և վերացելոյ և լի էր տունն փառօք: Եւ սերոբէք կային շուրջ զնովա. վեց թւը միոյ և վեց թւը միոյ... Սոլայսկին մի առ մի և ասէին տորք, տորք, տորք Տէր զօրովածեանց՝ լի է ամենայն երկիր փառօք նորա» (Ծայի, գլ. Զ, 1—3):

Այս տեսիլը հիշելու համար գրչին պետք է առիթ տային տաղի հետևալ տողերը.

Եւ ի վերայ նորա աթոռոք են կարգեալ...
Եւ ի վերայ նորա որդի արքայի,
Եւ բազմէ նորա՝ վեցթեան սերովըէքն,
Յահեկէ նորա՝ բազմաշեալ թերովըէքն...
Որը երգին և ասէին.

— Փա՛ռք Քրիստոսի ամենազօր յարութեան:

№ 3263 ձեռագրում տաղն սկսվում է այսպես. «Սայըն իշխանէին ի լունէն Մասեանց»: Այսուղ «Մասեանց»-ը ապավաղվելով դարձել է «Մասեանց», որի հիմնա վրա գրիչը կազմել է հետևալ խորագիրը՝ «Տաղ ի վերայ չորեքիերպեան աթոռոյն Մասեանց»:

№ 8736 ձեռագրի գրիչը ենթադրելով, թե Նարեկացին փառարանէլ է Էջմիածինը՝ տաղն ընդորինակել է «Սուրբ Էջմիածնայ տաղ» խորագրով:

Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող տաղի ձեռագրերից համեմատարար ամելի ընտիրն է № 2079 ձեռագիրը (էջ 404ա), որի մեջ տաղը վերնագրված է այսպես. «Սայի տաղն է ի Գրիգորէ Նարեկացոյ ասացեալ»: Ինչպես տեսնում ենք, այսուղ նույնական տաղի այլարանական բովանդակությունը չի ընկալված: Հավանաբար այսպիսի մի ձեռագրից են օգտվել նաև Հայկացան բառարանի հեղինակները, որոնք նույնական տաղը կոչում են «Տաղ սայի»²⁴:

Սայի հանեղուկային շարժման պատճառը նույնի է նաև մեր Մատենադարանի № 3498 ձեռագրի (էջ 287բ) գրչին, որը տաղի մեջ ներմուծել է իր սեփական տողերը:

Մետասան առաքելոց բանքն ի գործ
գայր, ի գործ,
Սայիկէն ի գործ գայր, ի գործ...

Սա փաստորեն տաղի այլարանական միտքը մեկնելու մի ուշագրավ փորձ է:

Մեկնությունների փորձեր կարելի է համա-

²⁴ Նոր բառգիրը Հայկացեան լեզուի, Բ. Ա., Վենետիկ, 1886 (տես «Ժմուղու», «Կրթեկան» և այլ բաներ): «Տաղ սայի» խորագիրն ունեն նաև մեր Մատենադարանի № 3189, 3498 ձեռագրերը:

րել նաև մեր ժամանակակից թարգմանությունները, որոնց մեջ նոյնական հանդիպում ենք այլարանական մոտքի մթության մետավաճով առաջացած որոշ վիճակից թարգմանության հետինակը տաղի մեջ իրենից ավելացրել է հինգ տող, որոնց մեջ կարդում ենք գրաբար բնագրում բոլորովին գոյություն չունեցող այնպիսի պատկերներ, ինչպիսից են Քրիստոսի՝ ձեռքերը կրծքին խաչած ձևով լինելով²⁵, ինչպես նաև այսի աշշարժությունից պատահների զարմանալու տողերը²⁶ և այլ պատկերներ:

Մյուս կողմից էլ թարգմանիչը խսպարաց է թողել տաղում առկա «Բարիր բարդ խոլըան» և «մին մանուշակ» արտահայտությունները, որոնցից առաջինն այլարանորեն մատնանշում է Հին Կոտակարանի համապետներին ու մարգարեներին, իսկ երկրորդը՝ «միաւորեալ Երրորդութեանը»: Մրանք տաղի կարևոր բաղադրիչներից են, որոնք չեն ներկայացվել ուստերեն ընթերցողին:

Հայագիտությունը, անկասկած, երախտապարտ է Ն. Գրեքսնին՝ քննարկվող տաղի հետ միասին ժողովածուում զետեղված նրա 166 ուստերեն թարգմանությունների համար (Նարեկացի, Շնորհալի, Երզնկացիներ, Ֆրիկ, Կեչառեցի, Աղյամարցի և շատ որիշներ): Սակայն «Հարության տաղի» թարգմանությունը կատարված է շատ ազատ և այդ առումով ակնհայտորեն զիջում է ուստերեն նախընդ թարգմանությանը, որի հեղինակն է անզուգական Բյուտիքը:

Դժբախտաբար, թերություն ունի նաև պրոֆեսոր Ասատոր Մնացականյանի աշխարհաբար թարգմանությունը: Գրաբար բնագիրը հիմնալի վերականգնմանը հրատարակելով համելու²⁷ միջնադարյան տա-

²⁵ Արմենական սրբագրություն ունի նաև պրոֆեսոր Ասատոր Մնացականյանի աշխարհաբար թարգմանությունը: Գրաբար բնագիրը հիմնալի վերականգնմանը հրատարակելով համելու միջնադարյան լիրիկական սրբագրությունը պահպանվել է տաղի համար կամական բնագրությունը և այսպիսի համապատասխան պահպանը պահպանվել է տաղի համար կամական բնագրությունը և այսպիսի համապատասխան պահպանը:

²⁶ Նոյն տեղում, էջ 145:

²⁷ Աս. Մնացականյանը ձեռագրերի բաղդասությամբ վերականգնել է տաղի համար կամական բնագրը, այն լազմակեղով 10 ամսիա տողերով: Այսունաու մենք այդ բրատարակությունը կանչենք կոչելով Գրեկաստումատիա (Հայ գրականության բրեստումատիա, միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի համար: Կազմեց Ա. Օ. Մնացականյանը, Երևան, 1970, էջ 121—128): Աշակերտների համար կազմված բրեստումատիան անշուշտ այն տեղը չէ, որտեղ շարադրվեն բնագրի վերականգնման մանրամասնությունները, բայց որ վերականգնումը կատարված է վարպետութեան կամական վեր է: Ծգրտման և լրացման կարուտ որոշ կետերի մեջ կանդրադառնամք ստորև:

ղերի ճանաչված մասնագետը նախորդ թարգմանություններից (Ա. Միհրարյան). և Գարեգին Եղիշևոս Տրավիզոնից) շնորհել է երբեմն ոչ բարենպաստ ուղղությամբ:

Եթե որևէ նկարիչ այսօր կամենա կտալի վրա նկարել տաղում պատկերվածը, պետք է նկարի մեջ առող Քրիստոսի համար և շորջը՝ բազմաթիվ առողներ շքախմբի մոտս մասնակիցների համար: Այդպես են հանկացել նախորդ թարգմանիչները և այդպես է գրված է տաղում.

Եւ ի վերայ նորա աթոռը են կարգեալ...
Առաջի նորա՝ մանկունք գեղեցիկ...
Ի ձեռին նոցա՝ սաղմոսարան և քնար...

Մնացականյանի թարգմանությամբ, սական, սայի վրա կա ընդամենը մեկ առող: Բացի այդ՝ գրաբարի ներկա ժամանակը («են կարգեալ») փոխված է անցյալով («երդված»).

Եվ նորա վրա աթոռ էր դրված...
Առջնից նորա՝ մանուկներ գեղեցիկ...
Զերբերին նրանց՝ սաղմոսարան և
քնար²⁸...

Մեր բնորած տողերում, ինչպես տեսնու ենք, մանուկները ձեռքներին սաղմու ու քնար առած՝ փառարանում են Քրիստոսին: Իրականում, հասկանալի է, որ Նարեկացին նկատի է ունեցել Քրիստոսի ուսմունքը փառարանող և տարածող հասուն սպասավորների: Ուրեմն՝ աշխարհաբար թարգմանելիս պետք էր բնագիր «մանուկ» բառը (որը գրաբար հշանակում է նաև հասուն սպասավոր) թարգմանել ավելի հարմար մի բառով:

«Մանուկ» բառը հանդիպում է նաև հետևյալ տողերում.

Եւ այն մանուկ խարտիշագեղն՝
Այն Հովհաննեսն էր Մկրտիչն.

Մնացականյանը թարգմանել է՝

Եվ պատահն այն՝ խարտիշագեղ՝
Մկրտիչն էր Հովհաննեսն:

Ինչպես տեսնում ենք, այս անգամ «մանուկ» բառը թարգմանված է «պատահն» բառով: Բայց սա նոյնպես ճիշտ չէ, որովհետև Հովհաննեսը տաղում կատարում է ոչ թե պատահու, այլ երեսուն անց մարդու դեր (ըստ Ավետարանի՝ Հովհաննեսը Քրիս-

տուին մկրտել է երեսուն տարեկան հասակում): Ուստի պետք էր այս դեպքում նոյնպես ընտրել ավելի հարմար մի բառ, որը Հովհաննեսին կմերկացներ այն զորավոր հասարակութիւնը, ուաշնաթիկունը, անեղագոշ» տղամարդու դերում, որը կարող էր ազդել աներեր եզների վրա և շարժման միջե նրանց:

Հովհաննեսն Մկրտիչ ձայնը լսելով՝ եզներն սկսում են կրկին քաշել տայր և խաղալ ու ցնծալ.

Դարձեալ խաղայր եզնամոլըն,
Խաղայր, ցնծալ աթոռակին:

Նարեկացուն չհասկանալով՝ գրիշները գրել են «եզնամոլին», «աթոռակին», որի համաձայն էլ աշխարհաբար թարգմանությունն ստացվել է այսպես.

Դարձյալ ձայնում ամոլներին,
Ցնծում, պարում աթոռակին:

Այսպիսով՝ Նարեկացին նկարագրել է եզների խաղալը, իսկ Աս. Մնացականյանի աշխարհաբար թարգմանության մեջ խաղացողը ոչ թե եզներն են, այլ Հովհաննեսն Մկրտիչը, որը պարում է աթոռակի վրա կանգնած:

Ցնծում, պարում աթոռակին:

Այս թյուրամիցությունը վերացնելու համար պետք է ապագա հրատարակություններում տաղը տպագրել մեր վերականգնած ձևով:

Տաղում Մովսեսի երկրորդ օրենքը կոչված է «Սինայից», այսինքն՝ Սինա լեռան վրա տրված օրենքը: Աշխարհաբար թարգմանության մեջ, սական, ոչ թե օրենքը, այլ սայլն է կոչված «Սինայից».

Սայլ-Սինայից՝ երկրորդ օրենքն էր Մովսեսի:

Սա առաջացել է սիսալ կետադրության («Սայլն ի Սինեայ՝ երկրորդ օրենքն էր Մովսեսի») հետևանքով: Պետք է ուղղել՝

Սայլն՝ ի Սինեայ երկրորդ օրենքն էր Մովսեսի և վերծանել այնպէս, ինչպես վերծանել են նախորդ թարգմանիչները.

²⁸ Հայտնի է, որ տաղում սայլը իշնում է ոչ թե Սինայից, այլ Մասիսից և այս մասին հայտնվում է երեք տարրեր տողերում:

Սայլն Մովսէսի երկրորդ օրենքը էր Սի-
նայէն³⁰:

Աշխարհաբար և ոռուերեն թարգմանու-
թյուններից մեր քերած սույն օրինակները,
ինչպես նաև գրականագիտական աշխա-
տություններում և ձեռագրերում տեղ գտած
վերոհիշյալ ոչ ճիշտ մեկնարանություններն
ու ընդօրինակությունները բխում են գիւս-
վորապես տաղի աղքաբանական մոքերի
սխալ ընկալումից: Սակայն նրանց մեջ կան
նաև այնպիսիները, որոնց պատճենը, ինչ-
պես տեսանք, գրչական թերություններն են:
Վերջիններս, դժբախտաբար առկա են գրե-
թե բոյր ձեռագրերում³¹:

Բայսականանար միայն ասելով, որ մեզ
չի հասել տաղի լիիվ ու ճիշտ կառուցը
պահանած ոչ մի ձեռագիր:

№ 2079 ձեռագրում տաղի վերնագրից
անմիջապես մետու ավելացված է. «տունք
լ.Ա», այսինքն՝ տաղը կազմված է 31 տեսից:
Թե քանի տող է հասկացել գրիշը «տուն»
ասելով՝ շփոթենք, հայտնի է, սակայն, որ
ոչ մի հաշվով այժմ 31 տուն չի ստացվում:
Կնշանակի, եթե թվանշանը ճիշտ է, տաղը
համապես մեզ լրիվ չի հասել: Մնացական-
յանը տարբեր ձեռագրերից հավաքել և
լրացրել է հիշյալ 10 տողը, սակայն, ինչպես
երևում է, դրանցով հանդերձ տաղը պակաս
է մնում:

Մ. Արենյանի հետադրությամբ՝ տաղի
վերջում սկզբնապես եղան նաև մետույալ
տողերը.

Քրիստոսի ամենազօր յարութեանն
երկրպագեն քերովիքը,
և վեցթենան սերովիքը,

Հոգևորական հնչմամբ երգեն ասելով.

— Փա՛ռը Քրիստոսի ամենազօր յա-
րութեանն:

Այսօր արձակեցաք ի կապանաց նա-
խահօրն

Եւ վերստին նորոգմամբ

Յահիտենական կենացն եղաք ժառան-
գորդք:

³⁰ Նարեկ, Մատևան ողբերգութեան ս. Գրիգոր Նարեկացի, գրաքար բնագիր Բանելիստադրությամբ աշխարհաբարի վերածեց Գարեգին Եպիսկոպոս Տրավիզոնցի, Պուենո Այրն, 1948, էջ 811: Հմտու. նաև Ա. Մինիթարյանի՝ նշված թարգմանությունը, էջ 65:

³¹ Ուշագրավ վրիպակներից են, օրինակ, №№ 3263, 3498, 3637, 7694 և այլ ձեռագրերում առկա «արունակ» (կամ «աթոռակից») և «Սերովիքն սպացեալք» տարընթերցվածքները, որոնց փոխարեն պետք է լինի «Վեցթենան սերովիքն» և «աթոռակ»:

Փա՛ռը Քրիստոսի ամենազօր յարու-
թեան:

Սովու տողերը առանձին գոյություն
ունեն նաև որպես շարական³²: Նրանց
պատկանելիությունը «Հարության տաղին»
Մ. Արենյանը պատճառաբանել է այսպես:
«Այս շարականի կրկնակը, որը նույն է «Յարութեան» տաղի կրկնակի հետ (Փա՛ռը
Քրիստոսի...), շարականի բովանդակու-
թյունն ու փառարանական բնակություննը,
ներովելեների և քերովելեների երևան գալը,
«Այսօր արձակեցաք» բառերը, և վերջապես
ազատ ոտանակորը երկուսի մեջ էլ, — այս
ամենը ցույց են տալիս, որ այդ «Յարութեան»
շարականն եղել է Նարեկացու «Յարու-
թեան» տաղի շարունակությունն իրեն Սիոն-
ցի որդիների երգ, որ պետք է լիներ տաղի
վերջում և պակասում է»³³:

Արենյանի փառարկմամբ անառարկեալի
է դառնուու «Հարության տաղի» և շարակա-
նի միջև գտնվող կապը, սակայն մենք հակ-
ված ենք կարծելու, որ շարականը ոչ թե
տաղի մասն է, այլ նրա օգտագործմամբ հո-
րինված առանձին շարական: Դա երևում է
թերևս շարականի հետևյալ տեսից, որը Մ.
Արենյանը չի քննարկել և որը տաղին չի
համապատասխանում:

Այսօր անուշահուտ բուրմամբ ընթանային
սուրբ կանաքը Տեսանելով զիրեցտակն արեգակնակերպ
փալլմամբ

Ի վերայ վիմին գոչէր ասելով.

— Փա՛ռը Քրիստոսի ամենազօր յարու-
թեան:

Բերված չորս տողերից առաջինը վերա-
մշակված կրկնությունն է տաղի հետևյալ
տողի:

Այսօր անուշահուտ բուրմամբ ընթանայր:

Այս տողը տաղում վերաբերում է սայլին,
որն ընթանում է անուշահուտ խոտերով
բարձված: Դակ շարականում տողին ավել-
լացված է «սուրբ կանաքն» արտահայտու-
թյունը, որի համաձայն՝ անուշահուտ բուր-
մամբ ընթացողները Քրիստոսի գերեզմանն
այցելած կանաք են Մարիամ Սագրադե-
նացին, մյուս Մարիամը և Սողոմոն:

(Ծարունակեալի)

³² Չարական, Կոստանդնուպոլիս, 1858, էջ 426:

³³ Մ. Արենյան, նշվ. աշխ., էջ 567, ծանոթ.: